ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Լուսառատ համայնք, Գևորգ Չաուշի փ. շ. 43,
հեռ. 6-11-20, բջջ. 093 440709, էլ. փոստ՝ lusarat@bk.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» 12. 2011 թ. թվականի N 19-Ն

## ԼՈՒՍԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2011 Թ. ԲՅՈՒՋԵՅԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 2012 Թ. ԲՅՈՒՋԵՅԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ

1. Լուսառատ համայնքի 2011 թ. բյուջեյի կատարումը գնահատել բավարար:
2. Հավանություն տալ և հաստատել Լուսառատ համայնքի 2012 թ. բյուջեն ըստ հետևյալ հոդվածների.
   1. Եկամուտների գծով - 54801,0 հազ. դրամ
   2. Ծախսային գծով – 54801,0 հազ. դրամ

      Եկամուտներ – 54801,0 հազ. դրամ

      1. Հարկային – 15670,0 հազ. դրամ

      որից՝

      հողի հարկ – 13650,0 հազ. դրամ

      գույքահարկ – 1810,0 հազ. դրամ

      տեղական տուրք – 210,0 հազ. դրամ

      2. Ոչ հարկային եկամուտներ –1289,6 հազ. դրամ

      որից՝

      վարձակալական հողի վարձավճար – 689,6 հազ. դրամ

      3. Պատվիրակված լիազորություն – 600,0 հազ. դրամ
      4. Դոտացիա - 27416,2 հազ. դրամ
      5. Տարեսկզբի մնացորդ - 10425,2 - հազ. դրամ

ԾԱԽՍԵՐ – 54801,0 - հազ. դրամ

Վարչական բյուջե - 44375,8 հազ. դրամ

որից՝

1.Գործադիր օրենսդիր մարմիններ պետական կառավարում –19315,0 հազ. դրամ

2. Նախադպրոցական կրթություն – 9450,0 հազ. դրամ

3. Սոցիալական հատուկ արտոնություն – 3800,0 հազ. դրամ

4. Մշակույթ – 2300,0 հազ. դրամ

5. Աղբահանություն - 1020,0 հազ. դրամ

6. Լուսավորություն – 650,0 հազ. դրամ

7. Գյուղատնտեսություն / անասնաբույժ/ - 720,0 հազ. դրամ

8. Հասարակական կազմակերպություններին աջակցություն - 400,0 հազ. դրամ

9. Շրջակա միջավայրի պաշտպանություն – 200,0 հազ. դրամ

10. Բարձրագույն կրթություն – 500,0 հազ. դրամ

11. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ - 6020,8 հազ. դրամ

Ֆոնդային բյուջե - 10425,2 հազ. դրամ

1. Գործադիր օրենսդիր մարմիններ – 19315,0 հազ. դրամ

4111 աշխատավարձ և հավելավճար - 12700,0 հազ. դրամ

4113 սոց. ապահովության վճար - 2600,0 հազ. դրամ

4212 էներգետիկ ծառայություն – 700,0 հազ, դրամ

4213 կոմունալ ծառայություն – 60,0 հազ. դրամ

4214 կապի ծառայություն – 270,0 հազ. դրամ

4215 մեքենայի ապահովագրություն – 35,0 հազ. դրամ

4232 համակարգչային ծառայություն - 50,0 հազ. դրամ

4235 փորձաքննություն, աուդիտ, դատարան - 50,0 հազ. դրամ

4241 մասնագիտական ծառայություն – 100,0 հազ. դրամ

4234 տեղեկատվական ծառայություն – 300,0 հազ. դրամ

4251 ընթացիկ նորոգում և պահպանում – 700,0 հազ. դրամ

4252 տրանսպորտային և գրասենյակային սարքավորում, նորոգում և պահպանում - 700,0 հազ. դրամ

4261 գրասենյակային պիտույքներ – 300.0 հազ. դրամ

4264 տրանսպորտային նյութեր – 600,0 հազ. դրամ

4267 տնտեսական նյութեր – 150,0 հազ. դրամ

2. Նախադպրոցական կրթություն – 9450,0 հազ. դրամ

4637 ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ - 9450,0 հազ. դրամ

3. Սոցիալական հատուկ արտոնություններ – 3800,0 հազ. դրամ

4726 հուղարկավորության նպաստներ – 800,0 հազ. դրամ

4729 այլ նպաստներ /օգնություն/ - 3000,0 հազ. դրամ

4. Մշակույթ – 2300,0 հազ. դրամ

4239 ընդհանուր հանրային բնույթի այլ ծախսեր – 800,0 հազ. դրամ

4269 հատուկ նպատակային նյութեր - 1500,0 հազ. դրամ

- բանակի կազմավորում – 60,0 հազ. դրամ
- մարտի 8 - ապրիլի 7 - 400,0 հազ. դրամ
- մայիսյան տոներ – 400,0 հազ. դրամ
- վերջին զանգ - 200,0 հազ. դրամ
- բերքի տոն - 200,0 հազ. դրամ
- սահմանապահի օր - 50,0 հազ. դրամ
- Ամանոր և սուրբ ծնունդ - 740,0 հազ. դրամ
- գիտելիքի օր - 250,0 հազ. դրամ

5. Հասարակական կազմակերպություններին աջակցություն – 400,0 հազ. դրամ

4819 Նվիրատվության այլ շահույթ չհետապնդող կազմակերպություն – 400,0 հազ. դրամ

6. Աղբահանություն - 1020,0 հազ. դրամ

4213 կոմունալ ծառայություն - 120,0 հազ. դրամ

4264 տրանսպորտային նյութեր - 900,0 հազ. դրամ

7. Փողոցների լուսավորություն –650,0 հազ. դրամ

4212 էներգետիկ ծառայություն – 500,0 հազ. դրամ

4251 ընթացիկ նորոգում և պահպանում - 150,0 հազ. դրամ

8. Գյուղատնտեսություն - 720,0 հազ. դրամ

4241 անասնաբուժական ծառայություն- 600.0 հազ. դրամ

4240 ագրոքիմիական ծառայություն -120,0 հազ. դրամ

9. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ - 6020,8 հազ. դրամ

ֆոնդային բյուջե - 10425,2 հազ. դրամ

5112 փողոցների լուսավորություն - 1000,0 հազ. դրամ

5112 գյուղի փողոցների գազաֆիկացում – 7325,2 հազ. դրամ

5113 փողոցների խճապատում – 1000,0 հազ. դրամ

5122 վարչական սարքավորումներ – 1000,0 հազ. դրամ

5134 նախագծանախահաշվային ծախս – 100,0 հազ. դրամ

Ավագանու անդամներ

Կողմ (6)

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ
3. ԽԱՉԻԿՅԱՆ ՎԱԶԳԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
5. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Լուսառատ համայնք, Գևորգ Չաուշի փ. շ. 43,
հեռ. 6-11-20, բջջ. 093 440709, էլ. փոստ՝ lusarat@bk.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » 12. 2011 թ. թվականի N 16 - Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով ՝ ի կատարումն ՀՀ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջների համայնքի ավագանին *որոշում է*

Լուսառատ համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա - շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար.

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար – 10000 դրամ

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ

բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 25000 դրամ

բգ/ 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 40000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 1500 դրամ

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության համար – 2000 դրամ

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում նաև ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

- նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության, ապա

սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը:

0.5 գործակիցը կիրառված է:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել – 2000 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար – 2000 դրամ

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար – 2 000 դրամ.

5. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), զվարճանքի օբյեկտները ժամը $24^{00}$ -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

ա/ առևտրի օբյեկտների համար – 25 000 դրամ

բ/ շահումներով խաղեր կաղմակերպելու համար – 250 000 դրամ

գ/ բաղնիքների ( սաունաների) համար - 200 000 դրամ

դ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 25 000 դրամ

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քմ – ի տեղական տուրքը սահմանել.

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 2000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -2500 դրամ

գ/ այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

8. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող

- հողերի մրցույթ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 500 դրամ

- հողերը օտարելու, աճուրդներ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 5000 դրամ

Ավագանու անդամներ

Կողմ (6)

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ
4. ԽԱՉԻԿՅԱՆ ՎԱԶԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
6. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

*04101071*